ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Արգիշտիի 1

№ 177-Ա «08» փետրվարի 2005թ.

ՄԱՇՏՈՑԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՊՈՂՈՏԱՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՆՑՄԱՆ ՎԵՐՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 115,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՉԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զինա Վարդանյանը դիմել է քաղաքապետարան՝ Երևանի քաղաքապետի 04.10.2001թ. հ.1202 և 31.01.2002թ. հ.131 որոշումների հիման վրա Մաշտոցի և Գլխավոր պողոտաների ստորգետնյա անցման մուտքի աստիճանների վրա առևտրի տաղավարի տեղադրման նպատակով տրամադրված տարածքի նկատմամբ, սահմանված կարգով, իր իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Վերոնշյալ որոշումների հիման վրա Մաշտոցի և Գլխավոր պողոտաների ստորգետնյա անցման մուտքի աստիճանների վրա առևտրի տաղավարի տեղադրման նպատակով Զինա Վարդանյանը Երևանի քաղաքապետարանի «Շինարարություն, բարեկարգում» ՊՓԲԸ-ի հետ 15.03.2002թ. կնքել է հ.2ա վարձակալության պայմանագիրը, այն վավերացրել է նոտարական կարգով, պատշաճ կերպով կատարել նախատեսված վճարումները, սակայն իրավունքների պետական գրանցում չի կատարել:

Երևանի քաղաքապետի 03.10.2002թ. հ.1720-Ա որոշմամբ Մաշտոցի և Գլխավոր պողոտաների ստորգետնյա անցման մուտքի աստիճանների վրա առևտրի տաղավարի տեղադրման նպատակով հարթակի կառուցման պարտավորությունները Զ.Վարդանյանի համաձայնությամբ փոխանցվել են քաղ. Ա.Հակոբյանին:

Նկատի ունենալով, որ Ա.Հակոբյանը վարձակալության պայմանագիր չի կնքել, վարձակալության վճարներ չի կատարել և հրաժարվում է կառուցապատողի իրավունքներից հօգուտ Զ.Վարդանյանի, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 31.01.2005թ. հ.18-10/1-Վ-5 եզրակացությունը, ինչպես նաև անշարժ գույքի կառավարման վարչության 03.02.2005թ. հ.20/1-Հ-13 զեկուցագիրը.

1.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2002թ. հոկտեմբերի 3-ի հ.1720-Ա որոշումը, իսկ Երևանի քաղաքապետարանի «Շինարարություն, բարեկարգում» ՊՓԲԸ-ի և Զինա Վարդանյանի միջև 15.03.2002թ. կնքված հ.2ա վարձակալության պայմանագիրը համարել անվավեր:

2.Վերականգնել Զինա Վարդանյանին տրամադրված՝ Մաշտոցի և Գլխավոր պողոտաների ստորգետնյա անցման մուտքի, «Դայմոնդ» սրճարանի հարևանությամբ գտնվող աստիճանների վրա հարթակի կառուցման, դրա վրա առևտրի տաղավարի տեղադրման և վարձակալության պայմանագրի կնքման իրավունքները:

3.Սահմանել, որ կառուցապատվող տարածքի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված հատակագիծ-սխեմայով:

4. Առաջարկել Կենտրոնի թաղային համայնքի ղեկավարին (Գ.Բեգլարյան)՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 04.10.2001թ. հ.1202 և 31.01.2002թ. հ.131 որոշումները, սույն որոշման հիման վրա կառուցապատողի հետ 22 տարի ժամկետով կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

5.Սահմանել, որ Ճարտարապետահատակագծային նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և շինարարության՝ շինաշխատանքներն սկսելու թույլտվության հայտի ներկայացման համար Երևանի քաղաքապետի 04.10.2001թ. հ.1202 որոշման 4.2. ենթակետով սահմանված մեկ տարի ժամկետը հաշվարկվում է սույն որոշման ընդունման օրվանից:

6.Նախազգուշացնել կառուցապատողին, որ տարածքի վարձակալության պայմանագիրը, << քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» << օրենքի 23-րդ հոդվածի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում՝ պետական գրանցման << անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

7.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության (Ս.Դանիելյան), Կենտրոնի թաղապետարանի (Գ.Բեգլարյան) վրա:

8.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ե. ՋԱԽԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ *02520026*